

Լուրեր

Շառլ Ազնավուրն այցելել է Արցախ



Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաք Ստեփանակերտի բնակիչները տեղատարափ ծափողջուններով դիմավորել են հայազգի շանսոնյե Շառլ Ազնավուրին, ով ժամանել էր Լեռնային Ղարաբաղի Յանրապետություն: Քաղաքի՝ Վերածնունդ անունը կրող կենտրոնական հրապարակում տեղի է ունեցել համերգ, որի ընթացքում ելույթ են ունեցել ֆրանսիացի երգչուհի Լիզ Սարյանը և Ազնավուրի դուստր Սեդա Ազնավուրը:

Հազարավոր հանդիսատեսների ներկայությամբ ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանն Ազնավուրին շնորհել է Արցախի ամենապատվավոր մրցանակը՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի շքանշանը, որին երգիչն արժանացել է «հայ ժողովրդի առջև բացառիկ ծառայությունների և վաստակների համար»: «Դուք մեր մեծ հպարտությունն եք, ողջ հայության և գալիք սերունդների համար ամենավաճառք օրինակը», - մշել է Բակո Սահակյանը: Հայաստանի Հանրապետության նախագահ Սեթ Սարգսյանը ևս հյուրընկալել է հանրահայտ երգիչին: Նա ողջունել է մեծանուն հայորդու հերթական այցը և անգնահատելի համարել նրա ծառայություններն իր արվեստով ու գործունեությամբ Հայաստանն աշխարհին ներկայացնելու և ճանաչելի դարձնելու ուղղությամբ:

Մեծանուն երգիչն ասել է, որ 21 տարվա ընդմիջումից հետո եղել է Լեռնային Ղարաբաղի Յանրապետությունում և խիստ տպավորված է:

Շուշիի խնդիրները կլուծվեն



«Հայաստան» համահայկական հիմնադրամի գործունեությունը 2009թ-ին կկենտրոնանա Շուշի քաղաքի խնդիրների լուծման վրա: Այս մասին հայտնել է հիմնադրամի գործադիր վարչության տնօրեն Արա Վարդանյանը:

«Շուշիում ենթակառուցվածքների՝ ճանապարհների, ջրատարների, ինչպես նաև բազիֆիկացման հետ կապված տուրջ խնդիրներ կան», - մշել է Վարդանյանը:

Նա ևս մեկ լուրջ խնդիր է համարել ուսումնական հաստատությունների հարցը:

«Հայաստան» համահայկական հիմնադրամը ստեղծվել է 1992թ-ին՝ ՀՀ նախագահի հրամանով: Գործունեության 15 տարիների ընթացքում հիմնադրամն իրագործել է Հայաստանի և ԼՂՀ զարգացմանն ուղղված 165 միլիոն դոլարի ծրագրեր:

Հիմնադրամի միջոցներով երկրում կառուցվել է ավելի քան 463,8 կմ երկարությամբ ճանապարհ, 211,8 կմ երկարությամբ ջրատար, 97 դպրոց, 410 բնակելի տուն, 34 բուժաստատություն:



«Ճանաչել պիմատությունը և վխրատ, իմանալ զբանս հանձարոյ»

Սովորե՛ք Յայերեն
Учите армянский!

խոսե՛ք Յայերեն
Говорите по-армянски!

խորի՛ք Յայերեն
Думайте по-армянски!

Ապրե՛ք Յայերեն
Живите по-армянски!

УРОК 14

ԴԱՍ 14

ЗВУК БУКВА

[ДЗ] 2, ձ

[Ц'] Ծ, ծ

[Ц] 3, ց



Звук дз

Звук [дз] – переднеязычный звонкий согласный. Он при- близительно соответствует произносимому слитно звуко- сочетанию [дз], произносится примерно, как русский д в сло- вах день, диск, дядя, лошадь. Этот звук есть и в грузинском языке. Он слышится, напри- мер, в грузинских фамилиях, оканчивающихся на [дзэ]: Са- акадзе, Георгидзе.

Произнесите следующие зву- косочетания: ձը [дзэ], ձի [дзи], ձե [дзэ], ձա [дзэ], ձու [дзу], ձո [дзэ]. Постарайтесь во всех этих звукосочетаниях произно- сить одинаково, примерно, как русский мягкий дь.

Степени сравнения име- ни прилагательного

Сравнительная степень при- лагательного в армянском языке образуется при помо- щи наречия [авели] более, которое ставится перед каче- ственными прилагательными: բարի добрый – ավելի բարի добрее (более добрый) ուժեղ [ужех] сильный – ավելի ուժեղ сильнее (более сильный) գեղեցիկ красивый – ավելի գեղեցիկ красивее (более кра- сивый) խելոք [хэлэк] умный – ավելի խելոք умнее

Прилагательные в сравни- тельной степени употребляются в предложениях преимуще- ственно следующих двух ти- пов:

1. с союзом բան [к'ан] чем и
2. без союза բան.

Примеры:
Նա ավելի բարի է, քան Սուրենը: [на авэли бари э, канн Сурэ- ны] Он добрее, чем Сурен.
= Նա Սուրենից (ավելի) բարի է: [на Сурэниц (авэли) бари э] Он

добрее Сурена.
Նա ավելի գեղեցիկ է, քան Անահիտը: [на авэли гэхэцик э, канн Анаһиты] Она красивее, чем Анаит.
= Նա Անահիտից (ավելի) գեղեցիկ է: Она красивее Ана- ит.
В предложениях второго типа слова Սուրենից, Անահիտից – форма исходного падежа. В этом падеже ставится второе существительное (местоиме- ние), с которым сравнивается первое.

Заметьте, что в предложе- ниях второго типа показа- тель сравнительной степе- ни может опускаться. В разговорной речи более употребителен этот тип предложения.

Превосходная степень об- разуется при помощи при- ставки աճեմա – [амэна] са- мый;

բարի - ամենբարի самый добрый, добрейший ուժեղ - ամենաուժեղ сильней- ший, самый сильный գեղեցիկ - ամենագեղեցիկ кра- сивейший, самый красивый Превосходная степень неко- торых прилагательных обра- зуется также при помощи суффикса – ազույն [агуйн], например:

լավ - ամենլավ, լավագույն хороший – лучший, самый хо- роший վատ - ամենավատ, վատագույն плохой – худший, самый пло- хой

Прилагательные часто упот- ребляются со словом շատ, ко- торое соответствует русскому очень, например: շատ լավ очень хороший; շատ գեղեցիկ очень красивый; շատ խելոք очень красиво

շատ տխուր очень грустный; շատ լավագույն очень грустно.

Запомните, что прилага- тельные в армянском языке, принимая определенный ар- тикль ը(ն), могут употреб- ляться как существительные и склоняться, например:

Այդ մատիտներից կարմիրը (= կարմիր մատիտը) տուր նրան: [ајд матитներիц кармиры тур нран]

Дай ему из этих карандашей красный (карандаш).

Запомните следующие наи- более употребительные ан- тонимичные пары прилаге- тельных:

լավ [лав] хороший – վատ [ват] плохой բարի [бари] добрый – չար [чар] злой ուժեղ [ужэх'] сильный – բույլ [т'уйл] слабый գեղեցիկ [гэх'эцик] красивый սիրուն [сирун] красивый – սղեղ [тыгэх'] некрасивый ուրախ [урах] веселый – տխուր [тыхур] грустный

Заучите прилагательные, обозначающие основные цвета:

սև [сэв] черный սպիտակ [спитак] белый կարմիր [кармир] красный կապույտ [капуйт] синий կանաչ [канач] зеленый դեղին [дэх'ин] желтый գորշ [горш] серый

Остальные цвета обознача- ются сложными прилагатель- ными, последним компонен- том которых является слово գույն [гуйн] цвет, например: մանուշակագույն [манушака- гуйн] фиолетовый (букв. цвета фиалки) երկնագույն [еркнагуйн] голу- бой (букв. небесного цвета)

Обратите внимание, что в при- веденных сложных прилага- тельных перед словом գույն появляется гласный . Это со- единительный гласный, кото- рый обычно соединяет компо- ненты сложных слов, ср. так- же:

դասագիրք [дасагирк] учебник (букв. учебная книга) մայրաքաղաք [майрак'ах'ак'] столица (букв. мать–город) Не забывайте, что прилага- тельные в армянском языке не согласуются с определяемым существительным. Приведем еще примеры: կանաչ տերև [канач тэрэв] зе- леный лист – կանաչ տերևներ [канач тэрэвнэр] зеленые ли- стья խավար գիշեր [хавар гишэр] темная ночь – խավար գիշեր- ներ [хавар гишэрներ] темные ночи

Курс ведет

Армине ОВСЕПЯН



ԱՄՏԾՈՆ ՏԱՍԸ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐԸ

9 Բո հարևանի դեմ սուտ վկայություն մի՛ տուր

Սուտ վկայությունը մեծ մեղք է և բազմաթիվ չարիքների պատճառ: Ստի աղբյուրը հենց ինքը չարն է, և առաջին սուտ վկայությունը տրվել է նրա կողմից. «Ինչո՞ւ Աստված սասաց, թե դրախտում գտնվող բոլոր ծառերի պտուղներից չեք կարող ուտել... Քանզի գիտեր Աստված, որ այն օրը, երբ ուտեք այդ պտղից, կբացվեն ձեր աչքերը և կլինեք աստ- վածների պես՝ բարին և չարն իմացող» (Ծն. Գ 1-4): Եվ այսպես մեղքն ու մահը ստով մտան աշխարհ:

Այս պատվիրանը խախտում են նրանք, ովքեր դատարաններում, զանա- զան ատեաններում, իրենց դեկավար- ների և ենթակաների ներկայության պատ- ճառով, շահագրգռությամբ կամ ուղղակի կաշառքով սուտ վկայություն են տալիս և կեղծում ճշմարտությունը: Սա նշանա- կում է ուղղակի մերժել Աստծուն, քանզի Քրիստոսն ասաց. «Ես եմ ճշմարտու- թյունը» (Յովհ. ԺՂ 6) և «Երբ գա Միխայ- րիչը, որին ես կուղարկեմ Հորից, ճշմար- տության Հոգին, որ ելնում է Հորից (Յովհ. ԺԵ 26) ... որովհետև հենց Հոգին է

ճշմարտությունը» (Ա. Հովհ. Ե 7):
Այս պատվիրանը խախտում են նաև այն մարդիկ, որոնք բարկության, նախանձի և չկամության պատճառով կամ անմեղ մարդկանց անունն ու պատիվն արատավորելու համար թշնա- մաբար հայտնում և անհիմն տարածում են ուրիշների գաղտնիքները, նենգաբար մեկնում մերձավորների խոսքերն ու գոր- ծերը, բանբասում, կեղծ լուրեր տարա- ծում, հրապարակում մարդկանց արատ- ները, թուլությունները, մեղքերը և այլն: Այսպիսիները մոռանում են, որ պետք է խորհեն սեփական մեղքերի ու արատ- ների մասին և խոր ապաշխարությամբ ջանան թողություն ստանալ Աստծուց:

Այս պատվիրանի դեմ մեղանշում են նաև կեղծավորները, շողոքորթները, դավաճանները, երկերեսանիները և չարախոսները, որոնք չեն գիտակցում իրենց գործած մեղքերի ծանրությունը, մտածում են, որ դրանք աշխարհիկ կյանքի պահանջներն ու ձևերն են, և դրանցով կարելի է հասնել բարեկեցիկ վիճակի: Միգուցե աշխարհիկ վայելքների

և հարստության կարելի է հասնել, բայց ոչ՝ հոգու փրկության, որովհետև վերը մշված մեղքերն առաջանում են նա- խանձից, հպարտությունից, փառասիրու- թյունից, ազահությունից, բռնախոհու- թյունից, բարկությունից, գողությունից, սպանությունից և այլ հոգեկործան մեղքերից: Այս չարիքից ազատվելու համար պետք է նախ զոջալ և խոստո- վանությամբ ապաշխարել, հարթել այս մեղքի վնասները և փոխհատուցել նրան, ում հանդես որ կատարվել է, ապա գոր- ծել այս մեղքին հակառակ առաքինու- թյունները, որոնք են՝ ճշմարտափ- րությունը, ուղղամտությունը, ազնվու- թյունը, պարզությունը, չափավորու- թյունը, խոհեմությունը, հավատարմու- թյունը, հարգանքը, մարդկանց բարի անունն ու պատիվը պաշտպանելը, որպեսզի արժանանանք մեր Փրկիչ Հի- սուս Քրիստոսի խոստացած հավիտե- նական կյանքին և փրկությանը:

Օրհնությամբ և աղոթքով՝ Տեր Անանիա քնն Բաբայան